ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 19 դեկտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը

Նախագահությամբ՝ Ռ. Պապայանի

Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի

Հ. Դանիելյանի

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Թագուհի Կուրդիյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Քաղ. Թագուհի Կուրդիյանը դիմել է Սահմանադրական դատարան, վիճարկելով «Հայաստանի Հանրապետության պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի սահմանադրականությունը:

2-րդ դատական կազմը գտավ, որ դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6 կետի, Սահմանադրական դատարանի մասին օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը և մուծվել է պետական տուրքը:

Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները և գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին օրենքի 69 հոդվածի 6 կետով, Սահմանադրական դատարանի 2-րդ կազմը

ՈՐՈՇԵՑ

Քաղ. Թագուհի Կուրդիյանի դիմումը՝ «Հայաստանի Հանրապետության պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային Ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝